ՈՐՈՇՈՒՄ
Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

«19» 04 . 2022թ. ք.Ալավերդի

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող՝ արդարադատության մայոր՝ Արտակ Աղեկյանս, ուսումնասիրելով 18.04.2022թ. վերսկսված թիվ 00845243, 00845339, 00845328, 00845269 կատարողական վարույթների նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 08.07.2014թ-ին տրված թիվ ԼԴ3/0380/02/13 կատարողական թերթի համաձայն պետք է Էդգար Խանաղյանից, Սերգեյ Սուքիասյանից և Հունան Յավրումյանից հօգուտ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 3.594.403 ՀՀ դրամ և հաշվեգրվող տոկոսները: Բռնագանձումը տարածել Վահրամ Սուքիասյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզի Տաշիր քաղաքի Էրեբունի թաղ. 6 թիվ 5ա հասցեում գտնվող անշարժ գույքի վրա:

Պահանջատիրոջ գրության համաձայն պարտապանի պարտքը 13.01.2022թ. դրությամբ կազմում է 20.247.325 ՀՀ դրամ:

Կատարողական գործողությունների կատարման ընթացքում հայտնաբերվել և արգելադրվել է պարտապան Վահրամ Սուքիասյանին սեփականության իրավունքով պատկանող գրավադրված Լոռու մարզի Տաշիր քաղաքի Էրեբունի թաղ. 6 թիվ 5ա հասցեում գտնվող ավտոտնակը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1 և 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1, 35.2, 35.3 և 35.4 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

Պարտապան՝ Վահրամ Սուքիասյանին սեփականության իրավունքով պատկանող գրավադրված Լոռու մարզի Տաշիր քաղաքի Էրեբունի թաղ. 6 թիվ 5ա հասցեում գտնվող ավտոտնակը՝

N	լոտի անվանումը նկարագիրը	գնահատման գին	մեկնարկային գին	գույքի քանակը
1.	Լոռու մարզի Տաշիր քաղաքի Էրեբունի թաղ. 6 թիվ 5ա հասցեում գտնվող ավտոտնակ, Կադաստրային ծածկագիր ՝ թիվ 06-008-209-017	5.000.000 ՀՀ դրամ	3.750.000 ՀՀ դրամ	1 հատ

ներկայացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ ***harkadir.achurd.am*** կամ ***WWW.ajurd.am*** միջոցով:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբ է սահմանվում՝ «07» 06. 2022թ.

Հրամանով ստորագրեց ուղարկել կողմերին:

Digitally signed by AGHEKYAN ARTAK
3307800582
Date: 2022.05.03 12:24:16 AMT

Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն: Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:

Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում:Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4–րդ, 5–րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լոտը չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտն իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց հետո, իսկ գույքի /լոտի/ հանձման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում՝ նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Ավագ հարկադիր կատարող
արդարադատության մայոր՝ Ա.Աղեկյան